ՍՊԱՐՏԱԿԻ ՄՈՏ ԺԱՄԱՆԱԾ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(Վարկած՝ Սպարտակի հետ Տիգրան Մեծի ռազմական կապերի վերաբերյալ)

ՌՈՒԲԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Մ. թ.ա. 73–71 թթ. Հին Հռոմում Թրակիացի Սպարտակի (Սպարտակոսի) գլխավորությամբ տեղի ունեցած ստրուկների մեծ ապստամբության մասին կա գիտահետազոտական և հանրամատչելի հարուստ գրականություն: Ապստամբության ժամանակագրությունը, ընթացքը, հիմնական իրադարձությունները հայտնի են շնորհիվ Սալլյուստիոսի «Պատմության» գրվագների, Պլուտարքոսի, Ապպիանոսի, Ֆլորոսի, Օրոզիոսի և այլոց հաղորդումների: Նրանց տվյալների հիման վրա XIX դ. վերջերին և XX դ. տարբեր երկրների պատմաբանները՝ քննության առարկա դարձնելով ապստամբության պատճառները, ապստամբների սոցիալական և էթնիկական կազմը, քաղաքական, ռազմավարական ծրագրերը, ռազմարվեստը, կրոնական հավատալիքները և այլ հարցեր, տվեցին ապստամբության՝ Կիկերոնի բնորոշմամբ «մեծ և դաժանագույն պատերազմի», ամբողջական պատկերը[1]:

Անհրաժեշտ է նշել, որ Հռոմի դեմ Սպարտակի պատերազմն առ այսօր դիտարկվում է միջազգային բեմահարթակից մեկուսացված, առանց հաշվի առնելու նրա կապերի հնարավորությունը Հռոմին ընդդիմադիր ուժերի հետ: Գուցե հենց դա է պատճառներից մեկը, որ, չնայած Սպարտակի ապստամբության նկատմամբ գիտական շրջանակներում եղած երկուհարյուրամյա հետաքրքրությանը, սկզբնաղբյուրները դեռ բովանդակում են փաստեր, որոնք բավարար պարզաբանում չեն ստացել: Մենք նախ և առաջ նկատի ունենք մ.թ.ա. 71 թ. սկզբներին Իտալիայի հարավում՝ Բրուտտիական թերակղզում հռոմեացիների կողմից պաշարված սպարտակյան բանակ եկած հեծելազորի մասին Ապպիանոսի հայտնի հաղորդումը:

Սակայն մինչև մեզ հետաքրքրող հարցը հետազոտելը, համառոտակի անդրադառնանք դրան նախորդող իրադարձություններին:

---

[1] Т. Моммзен. История Рима. Т. III, М., 1941, с. 74; F. Münzer. Spartacus - Pauly's Real Encyclopadie der classischen Altertumswissenschaft. Stuttgart, 1929, III A2, col. 1528-1536; J. Carcopino. Histoire Romaine. T. 2. La République romaine de 133 a 44 avant J-C. Cesar. Paris, 1936, p. 513-525. С. А. Жебелев и С. И. Ковалев. Великие восстания рабов II-I вв. до н. э. в Риме. Из истории античного общества. Известия Государственной Академии истории материальной культуры, вып. 101, М.—Л., 1934, с. 139-180. А. В. Мишулин. Спартаковское восстание. Революция рабов в Риме I в. до н. э. М., 1936, Նույնի՝ Спартак. М., 1947. К. П. Коржева. Восстание Спартака в советской историографии — "Вопросы истории", 1974, №10, с. 118-134; Spartacus. Symposium rebus Spartaci gestis dedicatum 2050a. Blagoevgrad, 20-24. IX. 1977, Sofia, 1981.

Ապստամբությունը սկսվեց 73 թ. սկզբներին՝ Կապուա քաղաքի գլադիատորական դպրոցում, գլադիատորների ըմբոստացմամբ: Մարտում ճանապարհ բանալով դեպի ազատություն՝ նրանք, Սպարտակի գլխավորությամբ ամրացան մարած հրաբուխ Վեզուվիուսի բարձունքների վրա, որտեղից անակնկալ գրոհով ջարդեցին իրենց դեմ ուղարկված պատժիչ զորամասերին: 73 թ. ընթացքում ապստամբները հասան նշանակալից հաջողությունների Կամպանիայում (Տիրենեյան ծովափի կենտրոնաիտալական գավառում): Զգալիորեն համալրվելով իրենց մոտ մասսայաբար փախչող ստրուկներով, կազմավորվելով և վարժվելով որպես բանակ, նրանք շարժվեցին դեպի Իտալիայի հարավը՝ Լուկանիա, գրավեցին Նոլե, Նուցերիա, Մետապոնտում, Թուրիի քաղաքները: 72 թ. Լուկանիայից՝ արդեն 70000 հազ. բանակով, արևելյան Իտալիայի վրայով Սպարտակն արշավանք սկսեց դեպի հյուսիս՝ Ալպերի կողմը, ակներևաբար նպատակ ունենալով հեռանալ Իտալիայից: Սենատը ուղարկեց ապստամբների դեմ չորս լեգեոն՝ կոնսուլներ Գելլիոս Պոպլիկոլայի և Կոռնելիոս Լենտուլոսի գլխավորությամբ: Փոփոխական ելքով մարտերից հետո Սպարտակը մեկ առ մեկ ծանր պարտություններ մատնեց կոնսուլներին և, շարունակելով իր հաղթական երթը, Պադուս (Պո) գետից ոչ շատ հեռու (Մուտինայի մոտ) ջախջախեց Ցիզալպիական Գալլիայի վարչապետ Կասիոսի երկու լեգեոնը (ապստամբները գրավեցին նաև հռոմեական ճամբարը): Իտալիայից ելքի ճանապարհը բաց էր ապստամբների առջև, սակայն Պոյի ափերի մոտակայքում Սպարտակը նոր շարժվեց: Ինչպես պնդում է Պլուտարքոսը, Սպարտակն իր առջև նպատակ դրեց հարձակվել հենց Հռոմի վրա, բայց ճանապարհին փոխելով մտադրությունը՝ Ապուլիանոսի հաղորդմամբ, հաշիվ տալով իրեն նման վիթխարի ձեռնարկման համար իր ուժերի անբավարար լինելուն, վճռեց անցկացնել իր զորքերը Սիցիլիա, և հրահրել այնտեղ ստրուկների նոր մեծ ապստամբություն՝ 104-101 թթ. ստրկական պատերազմից հետո: Դեպի Իտալիայի հարավն իր այդ արշավում Սպարտակը Պիցենի գավառում վերջնականապես ջարդեց իր ճանապարհը փակել փորձած կոնսուլների միացյալ ուժերը: 72 թ. հոկտեմբերին Սենատը վարկաբեկված կոնսուլների փոխարեն հրամանատարությունը պատերազմում հանձնեց Մարկոս Լիկինիոս Կրասոսին:

Կրասոսը՝ կարգապահություն վերականգնելով բարոյալքված զորքերում և իր ձեռքի ակ կենարոնացնելով 10 լեգեոն, շարժվեց Սպարտակի դեմ, որ բանակ էր դրել Ապուլիայում Թուրիի քաղաքում: Սպարտակն արդեն հասցրել էր պայմանավորվել կիլիկյան ծովահենների հետ՝ նրանց նավերով Սիցիլիա տեղափոխվելու մասին: Խուսափելով Կրասոսի հետ մեծ ճակատամարտից, Սպարտակն արագ հասավ Մեսինյան նեղուցը: Այսպիսով ապստամբների 90 հազ. բանակը կենտրոնացվեց Իրուտտիական թերակղզու հարավային ափին (Ռեգիում քաղաքի մոտ)՝ Սիցիլիայի դիմաց: Այստեղ ապստամբները չգտան կիլիկյան ծովահենների խոստացված նավերը, իսկ նրանց փորձը, ինքնաշեն լաստերով կտրել նեղուցը անհաջողության մատնվեց: Սիցիլիան Իտալիայից անջատող նեղուցում բուռն հոսանքը խափանեց նրանց ջանքերը, իսկ Սիցիլիայի դիմացի ափը վերահսկվում էր պրոպրետոր Գ. Վեռեսի կողմից:

Ապստամբների անհաջողությունն իսկույն ևեթ օգտագործեց Կրասոսը, որ գալիս էր նրանց հետքերով: Հռոմեական բանակը ձեռնարկեց վիթխարի պաշարողական-դաշտային աշխատանքներ: Արտասովոր կարճ ժամանակում Բրուտտիական թերակղզին իր ողջ լայնքով հարավային հատվածում կտրվեց խրամատով՝ Տիրենյան ծովից մինչև Հոնիական ծովը: Խրամատը ձգվեց՝ Հիպոնիատական (ժամ. Սանտա-Էուֆեմիայի) և Սկիլլետյան (ժամանակակից Սքուիլաչեի) ծովածոցերի միջև ընկած պարանոցով՝ (այսինքն մոտավորապես ժամանակակից Կաթանձարո՝ Սամբիազե քաղաքների գծում): Խրամատի երկարությունը կազմում էր մոտ 53 կմ, լայնությունը՝ 4,6 մ, խորությունը՝ 4,6 մ: Խրամատն ամրացվեց հողաթմբով (vallum), դրա վրա կառուցվեց ամուր և բարձր պատնեշ (Ապպիանոսի հաղորդմամբ՝ ցցապատնեշ): Ստեղծվեց ամրությունների հզոր դիծ: Սպարտակի բանակը հայտնվեց թակարդում՝ փակվեց, «կողպվեց» Բրուտտիական թերակղզու հարավային հատվածում, երեք կողմից ծովով կտրված փոքր տարածքում, որի երկարությունը հարավային ափից դեպի հյուսիս՝ մինչև Կրասոսի խրամատը 120-130 կմ էր, իսկ լայնությունը 40-ից 60 կմ: Շուտով Բրուտտիումի հարավում՝ «Իտալական կոշիկի քթում» կուտակված 90 հազ. զանգվածի վրա ծանրացավ սովի սպառնալիքը: Պլուտարքոսի հաղորդմամբ՝ Սպարտակը «թերակղզուց ոչինչ չէր կարող ստանալ»: Տվյալ փաստն անուղղակի վկայում է, որ Բրուտտիումի հարավի հռոմեամետ քաղաքները (Ռեգիում, Վիբոն, Լոկրի) գրավված չեն եղել ապստամբների կողմից (դրա մասին նույնպես տվյալներ չկան), և ձեռնպահ էին մնում պարենային մատակարարումներից ապստամբ ստրուկներին[1]: Կրասոսի հաշվարկը՝ շրջափակմամբ սովամահ անել հակառակորդին, սկսեց իրականանալ:

Սպարտակի զորքերի հետագա վիճակի և թերակղզում տեղի ունեցած իրադարձությունների մասին տեղեկությունները է պահպանել միայն Ապպիանոսը՝ Նրա հաղորդումը արժանի է խորազնին ուշադրության: «Կրասոսը,— գրում է Ապպիանոսը՝ սկսեց հետապնդել դեպի ծովը նահանջող Սպարտակին, որի նպատակն էր տեղափոխվել Սիցիլիա: Հասնելով Սպարտակի բանակին, Կրասոսը փակեց նրան, անջատելով խրամատով, հողաթմբերով և ցցապատնեշներով: Երբ Սպարտակը փորձեց դուրս գալ դեպի

---

[1] H. N i s s e n. Italische Landeskunde. Bd. 2, Berlin, 1912, S. 946; F. M u n z e r. *Նշվ. աշխ., էջ 1534;* J. C a r c o p i n o. *Նշվ. աշխ., էջ 522;* В. И. К у з и щ и н. Спартака восстание. — (карта). — Советская историческая энциклопедия, т. 13, М., 1971, с. 737-741. *Թ. Մոմզենը, ելնելով խրամատի լայնության մասին Պլուտարքոսի հաղորդումից, Կրասոսի պաշարողական գիծը տեղադրում էր հյուսիսում Թուրիի (Thurii) քաղաքից սկսած, սակայն այդ տեսակետը հերքվում է հենց Պլուտարքոսի այն հաղորդմամբ, որ խրամատի հաղթահարումից հետո Սպարտակի բանակը մարտնչում էր Պետելյան սարերի մոտակայքում՝ Թուրիից բավականին հարավ: Հավանաբար, Կրասոսի խրամատը ամրությունների ուղիղ գիծ չէր, այդ դեպքում Ֆ. Մյունցերի և Ժ. Կարկոպինոյի ընդունած տեղադրությունը համապատասխանում է աղբյուրների բերած թվին՝ 53 կմ: Անկասկած, Կրասոսի նպատակն էր սեղմել սպարտակյան զորքերին որքան հնարավոր է դեպի հարավ, դեպի ծովը և բացառված չէ, որ հռոմեական ամրությունների գիծն անցնում էր ավելի հարավային հատվածով, օրինակ, Պեկորարո բարձունքից դեպի հարավ ընկած գծով:*

Սպարտակի զորքերի արագընթացության պատճառներից մեկը պաշարողական մեքենաներ և սարքեր չունենալն էր: Ապստամբները, մշտապես կռիվներ տալով իրենց հետապնդող լեգեոնների, ի վիճակի չէին զբաղվել քաղաքների կանոնավոր երկարատև պաշարումներով:

Սամնիտիպա (Սամնիտների երկիրը), Կրասոսը լուսաբացին հակառակորդի գորքից կոտորեց 6000 մարդ, իսկ երեկոյան՝ գրեթե նույնքան, մինչդեռ հռոմեական բանակից սպանվածները յոթն էին: Այդպիսին էր Կրասոսի բանակում կատարված փոփոխությունը՝ սահմանած կարգապահությունից հետո: Այդ փոփոխությունը՝ հաղթանակին հասնելու համարձակություն և վճռականություն ներշնչեց հռոմեացիներին: Իսկ Սպարտակը, ինչ-որ տեղից (ποθεν) իր մոտ ժամանող հեծյալներին սպասելով (de ἱππέας ποθεν προσιόντας αὐτῷ) այլևս մարտի չէր գիմում իր ամբողջ գորքով, այլ շատ էր անհանգստացնում պաշարողներին տարբեր մասերում. մշտապես անսպասելիորեն հարձակվում էր նրանց վրա, փայտի կապոցներ նետում խրամատի մեջ, վառում գրանք և խիստ դժվարացնում հռոմեացիների համար պաշարումը: Նա կախեց գերի հռոմեացուն երկու գորքերի միջև ընկած տարածքում՝ ցույց տալու համար յուրայիններին թե ինչ է նրանց սպասելու պարտության դեպքում:

Հռոմում իմանալով պաշարման մասին, խայտառակություն համարեցին, որ գլադիատորների դեմ պատերազմը պիտի երկար տևի: Հասկանալով, որ Սպարտակի դեմ պատերազմը ծանր գործ է, հռոմեացիները երկրորդ հրամանատար ընտրեցին՝ Իտալիայից նոր վերադարձած Պոմպեոսին:



Սպարտակի արշավանքների ուղիները

Իմանալով այդ ընտրության մասին, Կրասոսը, որպեսզի հաղթանակի փառքը չհասնի Պոմպեոսին, ամեն ձևով փորձեց մարտի բռնվել Սպարտակի հետ, Սպարտակն էլ իր հերթին՝ Պոմպեոսին կանխելու մտադրությամբ, Կրասոսին առաջարկեց իր հետ բանակցել: Երբ այդ առաջարկը արհամարհանքով մերժվեց, Սպարտակը վճռեց դնալ վտանգավոր փորձի, և քանի որ

հեծյալներից բոլորը արդեն եկած էին նրա մոտ (,παρόντων οἱ τῶν ἱππέων ἤδη), ճեղքեց անցավ իր ամբողջ զորքով պաշարողական գիծը և նետվեց դեպի Բրունդիզիում»[4] (Բրունդիզիում խոշորագույն հռոմեական նավահանգիստ Ադրիատիկ ծովի ափին՝ ծովային ճանապարհի ելքն էր դեպի Բալկաններ (Դիրրախիում՝ ժամ. Դուրես):

Բերված հաղորդման մեջ հետաքրքրություն են առաջացնում Սպարտակի մոտ «ինչ-որ տեղից» եկած հեծելազորի մասին տեղեկությունները: Դրանք հարցեր են հարուցում և կարոտ են պարզաբանման: Անհրաժեշտ է նշել, որ պատմագրության մեջ այդ տվյալները սովորաբար անտեսվում, բաց են թողնվում առանց որևէ մեկնաբանության: Պատմաբանները նշում են միայն իրադարձության արդյունքը՝ Սպարտակի կողմից Կրասոսի պաշարողական գծի հաղթահարումը: Հազվագյուտ դեպքերում հիշատակելով նրանք արտահայտում են նրա վերաբերյալ հակասական ու անհստակ կարծիքներ:

Հեծելազորի մասին Ապպիանոսի տվյալները դեռ չեն եղել հատուկ ուսումնասիրության առարկա :

Այսպես, Ֆ. Մյունցերը, օրինակ իր հայտնի հոդվածում գրում է պաշարումից հետո Սպարտակի գործողությունների մասին. «Պատերազմը այդ տարածքներում մի քանի ամսով դադար էր առել, մեծ զորամիավորումների կողմից ճեղքման փորձերը ծանր կորուստներով ետ են մղվել, իսկ բանակցություններ վարելու առաջարկը մնացել է անուշադրության մատնված: Սպարտակը փորձում էր իր հակառակորդին մասնավորապես հնարավորին չափ շատ վնաս պատճառել, իսկ իր մարդկանց համոզիչ կերպով ներկայացնել իրենց անհույս վիճակը: Ի վերջո նրան հաջողվեց մի փոթորկալից ձմեռային գիշեր լցնել խրամատի մի մասը և անցկացնել իր բանակի մի մասը թշնամու ամրություններով»[5]: Ինչպես տեսնում ենք Ֆ. Մյունցերի բերված պատկերում հեծելազորը ամենևին էլ չի հիշատակված, հեծելազորի մասին Ապպիանոսի տվյալներն անտեսում է նաև Ժ. Կարկոպինոն: Զթաքցնելով իր քաղաքական կանխակալությունները, նա գրում է. «Ձմեռը վրա հասավ և սննդամթերքը սպառվում էր: Սպարտակը կործանված կլիներ, եթե չկարողանար ճեղքել: Առաջին փորձը հաջողությամբ չպսակվեց: 12 հազարը նրանցից, ովքեր փորձեցին, հողն էին կրծում: Այդ ժամանակ Սպարտակը փորձեց բանակցել, բայց այդ առաջարկը արհամարհանքով մերժվեց: Սակայն սովը դայլին հանեց անտառից, մի գիշեր, երբ ձյունն ու փոթորիկը սաստկացել էին, Սպարտակը լցնել տվեց մի կաբճ տեղանքում նրան շրջապատող խրամատը և հաղթահարեց այն առանց տագնապ բարձրացնելու...»[6]:

Շրջափակումից Սպարտակի դուրս գալը, առանց հեծելազորի մասին տվյալները հիշատակելու, վերարտադրում է ավանդական պատմաբան Ս. Լ. Ուտչենկոն. «Մի բուռն և փոթորկալից գիշեր, լցնելով խրամատի ինչ-որ մի հատվածը հողով, գերաններով, ձիերի և սպանված հռոմեացիների դիակներով, Սպարտակը անցկացրեց խրամատի վրայով իր բանակը և

[4] A p p i a n u s. Bella Civilia, I, 119-120.
[5] F. M ü n z e r. Նշվ. աշխ., էջ 1534:
[6] J. C a r c o p i n o. Նշվ. աշխ., էջ 522:

շարժվեց դեպի Բրունդիզիում, որի նավահանգստից ավելի դյուրին էր տեղափոխվել Բալկանյան թերակղզի»[7]:

Թեև Ապպիանոսի հաղորդումից հասկանալի է, որ ստրուկների առաջնորդը Կրասոսի խրամատի ճեղքման խնդրում վճռորոշ դեր էր հատկացնում հենց այդ իր մոտ եկած հեծելազորին, վերջինիս առկայության անտեսման, չհիշատակման օրինակները կարելի է դեռ երկար շարունակել (օրինակ, Ա. Վ. Միշուլինը իր մենագրություններում[8], *Վ. Ս. Սերգեևը*[9]): *Հ. Գորսկովը Կրասոսի գծի ճեղքման առթիվ նշում է, որ «Սպարտակն ուներ բավականին նշանակալից հեծելազոր»*[10], *բայց հաշվի չի առնում Ապպիանոսի ցուցումը, որ այն եկավ թերակղզում շրջափակված Սպարտակի մոտ և բնավ չի դնում նրա ո՞րտեղից գալու հարցը. Պ. Ս. Կառիշկովսկին բավարարվում է ոչինչ չպարզաբանող արտահայտությամբ, թե «թերակղզու ամբողջ հարավային ծայրից նրա մոտ գալիս էին հեծյալները»*[11]: *Նա անտեսում է հեծյալների մասին Ապպիանոսի ցուցումները: Վ. Լեսկովն իր վիպականացված և հորինվածքներով լեցուն գրքում, գրում է. «Գիշերը թշնամու ամրությունների դծի այն կողմը ուղևորվում էին Սպարտակի սուրհանդակները: Նրանք տանում էին առաջնորդի հրամանը պարտիզանական հեծյալ ջոկատներին ճեղքել-անցնել նրա հետ միավորվելու համար»*[12]: *Հեղինակի այդ պնդումները բացարձակորեն անվավերական են ու քմահաճ: Հակառակ թե՛ Ապպիանոսի և Պլուտարքոսի տվյալներին և թե՛ հասարակ տրամաբանությանը, հեղինակը պատկերացնում է աներևակայելին՝ հեծյալների Սպարտակին օգնության գալը հռոմեական բանակի դիրքի կողմից, ապստամբների համար անանցանելի ե հռոմեացիների կողմից վերահսկվող պարսպի և խրամատի վրայով: Եվ վերջապես բերենք Հ. Հյոֆլինգի՝ հարցը «փակող» եզրակացությունները. «Ապպիանոսի մոտ էլ խոսք է գնում հեծելազորի մասին, որի գալուստին, իբր թե, սպասում էր Սպարտակը ճեղքումից առաջ: Բայց այդ բանին հավատալ անկարելի է, քանի որ ո՞րտեղից այն պիտի հայտնվեր»*[13]: *Հ. Հյոֆլինգը եզրահանգում է. «անտիկ աղբյուրները հուսալի չեն գլադիատորների ապստամբության մասին տեղեկությունները հաղորդելիս»*[14]:

Գերմանացի հեղինակն իրավացի է միայն մի բանում՝ իր տված հարցում: Իսկապես ո՞րտեղից հեծելազորը պիտի հայտնվեր Բրուտտիական թերակղզու հարավային մասում՝ փոքր, լեռնային տարածքում՝ երիզված առավինյա նեղ հովիտներով: Սակայն աղբյուրում պահպանված փաստը

---

[7] С. Л. Утченко. Древний Рим. События. Люди. Идеи. М., 1969, с. 59.

[8] А. В. Мишулин. Спартак. М., 1947, с. 67, 70-71, 86.

[9] В. С. Сергеев. Очерки по истории Древнего Рима. Ч. 1, М., 1938, с. 271.

[10] В. Горсков. Военное искусство Спартака.— "Военно-исторический журнал", 1972, № 8, с. 82-87.

[11] П. О. Карышковский. Восстание Спартака. М., 1958, с. 51.

[12] В. А. Лесков. Спартак. М., 1983, с. 303.

[13] Г. Хёфлинг. Римляне, рабы, гладиаторы. Спартак у ворот Рима. М., 1992, с. 235; Helmut Höfling. Romer, Sklavern, Gladiatoren. Spartacus vor den Toren Roms. Gernsbach, 1987.

[14] *Նույն տեղում:*

չհասկանալը դեռ հիմք չէ աղբյուրի հավաստիությունը կասկածի տակ գնելու համար:

Անդրադառնալով Ապպիանոսի հաղորդմանը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա.

ա) Չնայած Սպարտակի զորքերի ճգնաժամային դարձող վիճակին (սովի սպառնալիք, Պոմպեոսի բանակի մոտալուտ գալուստ) և հետևաբար շրջափակումից դուրս գալու անհրաժեշտության, հեծելազորը գալիս է Սպարտակի մոտ ոչ ամբողջապես, այլ աստիճանաբար, ոչ մեծ քանակություններով: (Նա արդեն հասավ անհրաժեշտ քանակի, երբ Պոմպեոսը կատարեց իր երթը Իսպանիայից Իտալիա և ընտրվեց երկրորդ հրամանատար):

Ակնհայտ է հեծելազորի դանդաղ կուտակվելու փաստը, որն ինքնին արտասովոր է, հաշվի առնելով, որ նրա շարժումը պիտի կատարվեր խիստ սահմանափակ տարածության վրա՝ ամենաշատը 120-130 կմ երկարություն ունեցող հատվածում: Այդ առթիվ հետաքրքրական է նկատի ունենալ մարտական կամ վազքային նժույգի արագընթացության փաստերը: Նեսեական ձիերի ժամանակակից հետնորդը՝ աքալթեքինյան ցեղի նժույգը Կարակումի անջրդի և ավազային՝ 360 կմ տարածությունը հանգիստ երթով անցավ 3 օրում[15]: Հետևաբար, Բրուտտիումի հարավային ծովափից մինչև Կրասոսի խրամատն ընկած 120-130 կմ հեռավորությունը մարտական նժույգը հանգիստ քայլքով պիտի կտրեր 1 օրում, արագացված ընթացքի դեպքում՝ անշուշտ կրկնակի փոքր ժամանակահատվածում:

Հակառակ այդ իրողություններին՝ հեծելազորը համակենտրոնանում է Սպարտակի բանակատեղում առնվազն մեկ ամիս ժամանակում: Հեծելազորի այդ դանդաղկոտությունը բացատրություն է պահանջում: Ապպիանոսի վկայությամբ հեծյալները գալիս են «ինչ-որ» տեղից:

բ) Ապպիանոսը նշում է, որ Սպարտակը «սպասում էր» հեծյալներին, այսինքն չնայած այդ հեծելազորի կարիքին, Սպարտակն ի վիճակի չէր այն անմիջապես կենտրոնացնել իր ձեռքում, թեպետե այդ պահին՝ բացառությամբ Հռոմի կողմը բռնած հարավբրուտտիական քաղաքների, ապստամբները լիովին վերահսկում էին թերակղզու մնացյալ՝ գյուղական տարածքը: Պատահական չէ, որ հեծյալները գալիս են «ինչ-որ տեղից» մի վայրից, որն ինչպես երևում է, ենթակա չէր Սպարտակին: Այսինքն, եկած հեծյալները նրա զորքի հեծելազորից չէին:

գ) Խիստ կարևոր է այն փաստը, որ Ապպիանոսին և նրա հռոմեական աղբյուրին (միգուցե հենց Սալլյուստիոսին և վերջինիս հռոմեացի տեղեկատուներին) անհայտ է մնացել այդ հեծյալների գտնվելու նախնական տեղը՝ նրանց ելքի վայրը, որը, նշենք նաև, ենթակա չէր Սպարտակի իշխանությանը: Այդ վայրի մասին Ապպիանոսը ոչինչ չգիտի: Նա ասում է եկան «ինչ-որ տեղից» (ποθεν): Այդ տարօրինակ անգիտությունը բացաա-

[15] Жизнь животных, т. V, М., 1941, с. 682. Համաձայն Թ. Մոմզենի (նշվ. աշխ., էջ 314) Հռոմից՝ Ռավեննա անցնելու համար սուրհանդակին պահանջվում էր 3 օրից ոչ պակաս: Պարթևական (նեսեական) նժույգների կայտառության և տոկունության մասին հետաքրքրական փաստ է պահպանել Տակիտոսը (T a c i t u s. Annales, XI, 8): 39 թ. Պարթև Արշակունի Վարդանը Գոտարզի դեմ պայքարում երկու օրում սլացքով անցավ 3000 ստադիոն՝ 530 կմ:

բությունն է պահանջում, մանավանդ, եթե դարձյալ նկատի ունենաք, որ չիմացությունը վերաբերում է ոչ մեծ սահմանափակված տարածքի հռոմեացիներին և տեղացի բնակիչներին քաջածանոթ վայրի: Դեռ ավելին, ընդգծենք և այն հանդամանքը, որ Ապպիանոսը խոսում է ոչ թե մեկ անգամ կատարված գործողության մասին, որի ելակետը ինչ-ինչ պատճառներով կարող էր անհայտ մնալ, այլ նշում է քանիցս կրկնվող, շարունակվող հեծելաերթեր և այնուամենայնիվ, այդ դեպքում էլ այդ այրուձիու ծագման վայրը (թերակղզու սահմանափակ տարածքում) անհայտ է մնացել տեղացի հռոմեամետ բնակչությանը, որը պիտի լիներ հռոմեական կողմի առաջին տեղեկատուն (Ռեգիում, Վիբոն, Լոկրի քաղաքների բնակիչներ):

Հարկավոր է անվերապահորեն բացառել Բրուտտիումի հարավային քաղաքների կողմից ապստամբ ստրուկներին հեծելազոր տրամադրելու հնարավորությունն իսկ: Քաղաքները՝ հռոմեական իրավունքի տեր քաղաքացիական համայնքներն առհասարակ թշնամաբար էին տրամադրված ապստամբների նկատմամբ (Ապպիանոսի վկայությամբ ոչ մի քաղաք (կամովին) չէր անցել Սպարտակի կողմը): Իրենց դիրքով, ինչպես վերը նշվել է, Բրուտտիումի քաղաքները նպաստեցին սովի սպառնալիքի սաստկացմանը սպարտակյան բանակում, փաստորեն, մասնակցում էին ներսից նրա շրջափակմանը: Ըստ երևույթին, ապստամբ ստրուկների և քաղաքային բնակիչների միջև նույնիսկ առևտրական հարաբերություններ չեն հաստատվել, այդ է վկայում Սպարտակի բանակում նավակների և պարանների խիստ պակասը: Նեղուցը կտրելու փորձի ժամանակ լաստերի դերանները կապվում էին միմյանց խաղողի վազերով և կաշվե մտրակներով (Sallust. Frg. IV, II, 30): Ինչպես երևում է, Սպարտակը կտրել է տվել քաղաքացիներին պատկանող խաղողի այգիները):

Այդ փաստերի լույսի ներքո անկարելի է ենթադրել, որ հեծյալները ծագումով եղել են տեղական քաղաքների բնակիչներ (այդ տեսակի «բացատրությունը», իր հերթին, կպահանջեր բացատրել ունևոր քաղաքացիների (ձիավորների) կողմից ստրուկների կողմում Հռոմի դեմ պատերազմելու շարժառիթները): Անհնարին է և անհիմն ենթադրել, անգամ, թե հեծելազորը կազմակերպվել է և վարժեցվել թերակղզում մոտ ամիս ու կես՝ երկու ամիս գտնվելու ժամանակահատվածում, համալրվելով տեղական ինչ-որ ստրուկներով (կամ սպարտակյան զինվորներով):

Բարդ մարտական խնդիրների ունակ հեծելազորի՝ նժույգի և հեծելամարտիկի վարժեցումը բավականին երկար ժամանակ էր պահանջում: Ուշագրավ է, որ Ապպիանոսը նշում է Սպարտակի նոր մարտավարությունը հեծյալների արդեն ինչ-որ քանակի ժամանումից հետո. «Այլևս մարտի չէր գիմում իր ամբողջ զորքով, այլ շատ էր անհանգստացնում պաշարողներին տարբեր մասերում (ἀνὰ μέρος): Մշտապես անսպասելիորեն հարձակվում նրանց վրա, նետում փայտի կապոցներ խրամատի մեջ, վառում դրանք և խիստ դժվարացնում հռոմեացիների համար պաշարումը»: Այդ գործողությունների նպատակը հասկանալի է. վառվող կապոցներից բարձրացող բոցը, ծուխը, պիտի ծանր դարձներին պատնեշի այն կողմում՝ հողաթմբի վրա դիրքավորված լեգեոնների կացությունը: Նկատենք նաև, որ այդ կարելի է անել միայն եթե 4,6 մ խորություն ունեցող խրամատի

հատակից կրակն ու ծուխը բարձրանային մինչև հողաթմբի վրա գրված պարսպի վերևը՝ հռոմեացիների տեղակայման գիծը՝ այսինքն բոցի բարձրությունը, պիտի լիներ մոտավորապես 10 մ ոչ պակաս, այդ դեպքում, հարկավ, ինչպես ասում է Ապպիանոսը, պաշարումը խիստ դժվարանում էր: Ակնհայտորեն նետվում էին մեծ կապոցներ և դժվար հանգցվելի: Ապպիանոսի նկարագրած մարտաեղանակը, իրականացվում էր հաճախաբար և անսպասելի, այսինքն կատարողները եղել են արագընթաց: Հետևակայինները անկարող էին հաջողությամբ կապոցներով մոտ վաղել խրամատին և նույնքան հաջողությամբ հեռանալ: (Հռոմեացի լեգեոնները տեգ էր նետում 25 մ հեռավորության վրա, հռոմեացի պարսատիկավորները աչքի էին ընկնում իրենց դիպուկությամբ): Ամենայն հավանականությամբ Ապպիանոսը նկարագրում է նորեկ հեծելազորի հմուտ և վարժ գործողությունները: Խստիվ հետևելով Ապպիանոսի խոսքերին, կարող ենք նկատել գործողությունների հաջորդականությունը: Նախ, խրամատի խորքը գցվում էր կապոցը, իսկ հետո՝ այն վառվում: Եթե այդ այդպես էր, ապա բոցավառել խրամատի հատակում, հռոմեական հողաթմբի ստորոտում ընկած տրցակը կարելի էր միայն դիստանցիոն կրակավառությամբ՝ նետահարությամբ: Կարելի է ենթադրել, որ հեծյալը պիտի զինված լիներ նետ ու աղեղով:

Սպարտակի մոտ եկած հեծելազորի սլրոֆեսիոնալ գործողություններն արդեն իսկ բացառում են նրա ձևավորվելը տեղում՝ Թերակղզում: Առավել ևս, հեծելազորին տեղական ծագում վերագրելու ամեն մի փորձը ինքնին կմերժվի մեր աղբյուրի՝ հեծելազորի ծագման վայրի վերաբերյալ չիմացությամբ[16]*:*

Այսպիսով, մենք հիմք ունենք հաստատապես ձևակերպելու հետևյալ եզրակացությունը. Թերակղզու հարավի սահմանափակ տարածքում հեծելազորի գտնվելու նախնական վայրի կատարյալ չիմացությունը աղբյուրի

---

[16] *Այդ առթիվ հարկ է նշել, որ Ա. Ա. Մոտուսը սխալմամբ հակված է կարծելու, որ հեծելազորը կազմավորված է եղել տեղացի հովիվ-սարուկներից (*А. А. Мотус. J.-P. Brisson. Spartacus. Paris, 1959 (рец.) — "Вестник древней истории" *(այսուհետև՝ – ВДИ)*, 1966, № 4, с. 188): *Այդ կարծիքը անտեսում է Ապպիանոսի ավյալները. ա) Թերակղզու խիստ սահմանափակ տարածությունում հեծելազորի աստիճանական, դանդաղ կենտրոնանալը, բ) այդ հեծելազորի Սպարտակի հարկադրված սպասումը: Պատրաստել մարտունակ հեծելազոր անկարելի է կարճատև ժամանակում: Տվյալ հարցում Ա. Ա. Մոտուսը նաև հենվում է Ապպիանոսի հաղորդման ոչ ճիշտ ընթերցանության վրա. Սպարտակը սպասում էր իրև, թե «ամեն տեղից իր մոտ ժամանող հեծյալներին»* ["всадников, отовсюду прибывавших к нему" — *նույն տեղում: Ըստ Ա. Դ. Վեյսմանի* ποθεν - "откуда-нибудь" (А. Д. Вейсман. Греческо-русский словарь. СПб., 1899 (М., 1991), с. 1016]. *Ըստ Ի. Խ. Դվորեցկու* ποθεν — "откуда-либо" (И. Х. Дворецкий. Древнегреческо-русский словарь. Т. 2, М., 1958, с. 1334). *Հ. Ուայթի թարգմանությամբ* ποθέν — "from somewhere" (A p p i a n. Roman History. The Civil Wars. B. I, V. 4, 1955, p. 221): *Հեծելազորը չէր կարող կազմավորվել հովիվ-սարուկներից նաև անասնապահությանը բնորոշ առանձնահատկությունների պատճառով: Տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր հասարակություններում ձիերի երամակի արածեցումը չէր պահանջում մեծաքանակ աշխատուժ: 300 ձիերից երամակը պահվում էր ընդամենը երկու հեծյալ հովիվների կողմից (տե՛ս* А. М. Хазанов. Роль рабства в процессах классообразования у кочевников евразийских статей. — Становление классов и государства. М., 1976, с. 267—268*):*

(և իր հռոմեական տեղեկատուների) կողմից անվերապահորեն վկայում է այդ վայրի թերակղզուց դուրս գտնվելու օգտին:

Բրուտտիումի հարավում Սպարտակի բանտկատեղը եկած հեծելազորի մասին Ապպիանոսի տվյալների քննությունը հանգեցնում է մի շարք հարցերի, որոնց անկարելի է բացատրություն տալ, ելնելով տեղի՝ Բրուտտիական թերակղզու հարավային սահմանազատված հատվածին բնորոշ իրողություններից (աշխարհագրական, քաղաքական): Հետևաբար, մենք հիմք ենք ստանում կարծելու, որ Բրուտտիական թերակղզու հարավային հատվածում շրջափակված սպարտակյան զորքերին օգնության եկած հեծելազորը ուներ ո՛չ տեղական, ո՛չ իտալական ծագում, այսինքն Բրուտտիում եկել էր դրսից և կարող էր, ուրեմն հասցվել միայն ծովով, նավատորմով: Հեծյալների գտնվելու նախնական վայրը ծովից այն կողմն էր՝ և այդ իսկ պատճառով հայտնի չդարձավ հռոմեացիներին: Ինչպես հայտնի է, ծովը ոչ միայն անջատում էր երկրները, այլև ծառայում էր որպես նրանց միջև հաղորդակցման անխոչընդոտ միջոց: 70-ական թվականների վերջերին Միջերկրական ծովը ամենևին ենթակա չէր հռոմեացիների վերահսկմանը և ծովային ուղիները նրանց տեսադաշտից դուրս էին: Ծովի վրա անսահմանափակ իշխում էին կիլիկյան և կրետոսյան ծովահենները:

Ո՞վ կարող էր Սպարտակին օգնություն ուղարկել, շահագրգռված լինել նրա զորքերի փրկությամբ: Ո՞վ էր Հռոմի այդ հզոր թշնամին:

Ապպիանոսի հաղորդման մեջ կա մի հետաքրքրական զուգադիպություն: Եթե Սպարտակն իր շրջափակվելու նախնական փուլում նպատակ ուներ Կրասոսի ամրությունները հաղթահարելուց հետո արշավել Կենտրոնական Իտալիա՝ Սամնիում, դեռևս 81 թ. Սուլլայի ռեժիմին կատաղի դիմադրության պատվարը, ապա հեծելազորի հայտնվելուց հետո նրա ռազմական ծրագիրը փոխվում է: Այժմ ապստամբների առաջնորդը վճռում է շարժվել դեպի Բրունդիզիում՝ այնտեղից Հունաստան փոխադրվելու նպատակով:

Հունաստանում 90 հազար հակահռոմեական զինուժի ի հայտ գալը կարող էր ոչ միայն «սպայթեցնել» Մարկոս Լուկուլլոսի արյունալից գործողություններով հենց նոր «խաղաղված» Թրակիան (72 թ.), այլև, սպառնալիք ստեղծել Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսի թիկունքում՝ Միհրդատի դեմ պատերազմում: Կասկածից վեր է, որ Սպարտակի ապաշրջափակվելը և Հունաստան փոխադրվելը ձեռնտու պիտի լիներ Պոնտոսի թագավորին, որը 73 թ. ձմռանը և 72 թ. գարնանը ծանրադույն պարտություն էր կրել Լ. Լ. Լուկուլլոսից Մարմարա ծովի ափին՝ Կիզիկոսի մոտ: 73– 72 թթ. Միհրդատի նավատորմի մեծ մասը Մարմարա ծովից ետ նավարկեց դեպի Բիթինիա, ճանապարհին վիթխարի կորուստներ տալով մոլեգնած փոթորիկներում (նույնիսկ ջրասույզ եղավ արքային տանող նավը): 72 թ. գարնանը հռոմեական էսկադրաները Լ. Լ. Լուկուլլոսի գլխավորությամբ Լեմնոսի և Տենեդոսի մոտ գլխովին ջախջախեցին Էգեյան ծովում մնացած պոնտական նավատորմը: Ըստ Մեմնոնի՝ 73 թ. պոնտական նավերի ինչ-որ քանակին հաջողվեց Էգեյան ծովից հասնել մինչև Իսպանիա և Կրետե՝ (ծովահենության խոշորագույն օջախ Լեռնային Կիլիկիայի հետ մեկտեղ): Սակայն 72 թ.՝ Պոնտոս վերադարձին այդ նավերը ոչնչացվեցին: Հռոմեացի-

ները գրավեցին Բիւթանիայի խոշորագույն քաղաքները՝ Պրուսիագան, Նիկեան, իսկ 72 թ. երկրորդ կեսին Լ. Լ. Լուկուլլոսը իր ցամաքային ուժերով կանգնած էր արգեն Պոնտոսում, պաշարելով Ամիսոսը, Եվպատորիան և Թեմիսկյուրան: Միհրդատը՝ Պոնտոսի կաբեյրական երկրամասում ավարտին էր հասցնում իր նոր ռազմուժի կազմավորումը՝ 40 հազ. հետևակ և ընդամենը 4 հազ. հեծյալ: Լուկուլլոսը ձեռնարկեց լայնածավալ ներխուժում Պոնտական թագավորության խորքը 71 թ. գարնանը՝ Սպարտակի կործանվելուց փոքր-ինչ հետո (71 թ. մարտին) կամ դրա հետ միաժամանակ: 71 թ. ամռան վերջերին Միհրդատը լիովին ջախջախվելով, ապաստան գտավ Հայաստանում: Ակնհայտ է, որ Բրուտիական թերակղզու հարավում Սպարտակի շրջափակման պահին (72 թ. դեկտեմբերից 71 թ. փետրվար) Միհրդատն արգեն կորցրել էր իր ծովային ուժերի մեծ մասը, նրա նավատորմի մնացորդները տեղեկայված էին Սև ծովի խոր արևելքում և ելքի հնարավորություն չունեին դեպի Էգեյան ծով: Զուներ Միհրդատը քանակապես բավարար հեծելազոր, չուներ նաև ելք ցամաքի վրայով դեպի Արևելյան Միջերկրածովքի ափերը: Հռոմեացիները կանգնած էին Լյուկոսի (Գայլ գետի) ափին, իսկ նրանց թիկունքին՝ Կապադովկիան և Գալաթիան վերահսկվում էին հռոմեական դաշնակիցների ուժերի կողմից (Դեյոթարոսի գալաթական մեծաթիվ հեծելազորը): (Այդ տարածքների վրայով Պոնտական հեծելազորայինների երթը դեպի Լեռնային Կիլիկիա ինքնին երևակայելի չէ անգամ):

Այսպիսով, հարկ է բացառել Միհրդատի կողմից Սպարտակին ռազմական օգնություն ուղարկելու պես ռազմական միջոցառման հնարավորությունն իսկ:

Հետևաբար մենք պիտի ենթադրենք, որ Սպարտակին օգնություն կարող էր ուղարկել Հռոմի մեկ այլ հակառակորդ՝ Տիգրան Մեծը: 93 թ-ից ի վեր հայ-հռոմեական հարաբերությունները իրենցից ներկայացնում էին պատերազմական իրավիճակ: 93-83 թթ. Տիգրան Մեծի վճռական քաղաքականությունը՝ Հռոմի ազդեցությունը Արևելքում, Կապադովկիայում, Սիրիայում և Կիլիկիայում վերացնելու նպատակով Հռոմում գնահատվեց որպես իր դեմ պատերազմի սանձազերծում: Արտահայտելով Հռոմի սենատի դիրքորոշումը հայոց թագավորի արտաքին քաղաքականության նկատմամբ, Մ. Տ. Կիկերոնը գրում է. «... նա (Տիգրանը) անօրենություններ գործելով մեր դաշնակիցների հանդեպ, կարելի է ասել, պատերազմ էր սանձազերծել մեր դեմ»[17]: Տիգրանի տերության կազմի մեջ մտած Սիրիան դիտվում էր որպես բռնազավթված Սելևկյան թագավորություն: 74-72 թթ. սենատը Սիրիայի թագավոր ճանաչեց Հռոմ եկած Անտիոքոս XIII-ին: Միաժամանակ սենատը նրան շնորհեց Հռոմի բարեկամի և դաշնակցի (amicus et socius) կարգավիճակ: Այդպիսին էր Հռոմի պաշտոնական արձագանքը՝ Սիրիայում 83 թ. Տիգրանի գահակալմանը: 72 թ. Անտիոքոս XII-ը որպես Սիրիայի ճանաչված թագավոր, Հռոմի բարեկամ և դաշնակից մեկնեց Հռոմից և ափ իջավ հարավային Սիրիայում՝ գլխավորելով Տիգրանի տիրապետության դեմ ռազմական ելույթը: Քաղաքականապես աջակցելով հակատիգրանյան այդ ելույթը, Հռոմը պատերազմական վիճակ

[17] Cicero. Pro P. Sestio or., 27, 58.

ստեղծող քայլ էր գործում՝ իր և Տիգրանի միջև, փաստորեն պատերազմ էր սկսում հայոց արքայի դեմ, վարելով այն դեռ Սելևկյանների ձեռքով:

Կիկերոնի հաղորդմամբ Անտիոքոս XIII-ը նավարկելով դեպի Սիրիա՝ Տիգրանի դեմ պատերազմը դլխավորելու նպատակով, կանգ առավ Սիցիլիայում, Սիրակուզեում: Այդ առթիվ Կիկերոնը հաղորդում է. Սիցիլիայի վարչապետ պրոպրետոր Գ. Վեռեսին հայտնի դարձավ, որ Սիրիայից, Սիցիլիա մեկնարկած ծովահենները նպատակ ունեն հարձակվել Անտիոքոսի վրա[18]: Կիկերոնի այդ հաղորդումը խիստ հետաքրքրական է: Պարզվում է, որ կիլիկյան ծովահենները Սիցիլիայի ափերի մոտ գործում էին ի շահ հայոց թագավորի: Ուշագրավ է, որ այդ հանձնարարությամբ նրանք դուրս են եկել Սիրիայից՝ Տիգրանի թագավորությունից: Կիլիկյան ծովահենների և Տիգրան Մեծի փոխհարաբերությունների հարցի վերաբերյալ արժեքավոր է Ստրաբոնի հաղորդումը նրանց միջև կայացած համաձայնության մասին: Ըստ Ստրաբոնի իր իշխանությանը ենթարկելով Սիրիան, հայոց թագավորը (տեքստում՝ հայերը) «ծովը հանձնեց կիլիկեցիներին»[19] : Այդ առթիվ կարևոր է նշել, որ Սիրիայում Տիգրանի գահակալելու պահին կիլիկյան ծովահենների՝ Արևելյան Միջերկրածովքի ջրերում, մանավանդ կիլիկյան-սիրիական անկյունում տիրապետությունն արդեն կայացած փաստ էր: Եվ այնուամենայնիվ, ուշագրավ է, որ տեղի ունեցավ ծովահենների կողմից Տիգրանին ճանաչելու փաստը որպես «ծովի» իրենց ջրատարածքի տիրակալի՝ այսինքն գերագույն իշխանության՝ սուվերենության կրողի, որն այնուհետև «ծովի շնորհումով» օրինականացնում էր (լեգալիզացնում) նրանց դրությունը՝ տիրապետությունը Միջերկրական ծովի արևելքում:

Տվյալ համաձայնությամբ անշուշտ վերջ դրվեց կիլիկյան ծովահենների հարձակումներին, Տիգրանին հպատակ Սիրիայի և Դաշտային Կիլիկիայի առափնյա շրջանների վրա: Կասկածից վեր է, որ այդ համաձայնությունն իրագործելի էր Տիգրանի ռազմական կարողությունների շնորհիվ: 83 թ. հաստատվելով Դաշտային Կիլիկիայում Տիգրանը դարձավ ծովահենների ռազմակայանների անմիջական հարևանը Լեռնային Կիլիկիայում և կարող էր նրանց սպառնալ ցամաքից: Այսպիսով, Տիգրանի արևելամիջերկրածովյան տերության ստեղծմամբ կիլիկյան ծովահենների այլևս մատչելի չէին մերձավոր տարածքները՝ Սիրիան, Կիլիկիան: Այդ հանգամանքը նրանց հարկադրեց տեղափոխել իրենց ռազմական ակտիվությունը դեպի Արևմտյան Միջերկրածովք՝ Հռոմին ենթակա ջրեր, անմիջապես հարվածելով Հռոմի շահերին: 70-ական թվականների սկզբից, կիլիկյան ծովահենները արագ վերակազմավորվում են որպես հզոր ռազմաքաղաքական միավորում, և հակահռոմեական ուժ: Հեռավոր և երկրատև արշավանքներ (դեպի Սիցիլիայի, Իտալիայի, Իսպանիայի ափերը) կատարելու համար ծովահենները զաբկ տվեցին մեծ ռազմանավերի՝ բիրեմաների և տրիերաների շինարարությանը: Ակնհայտ է, որ տիգրանյան տերության ձևավորվելը անմիջական խթան ծառայեց ծովահենային շարժման վերելքին և ուղղվածության փոխվելուն դեպի արևմուտք, ընդդեմ Հռոմի: Կիլիկյան ծովա-

[18] Cic. Verr. IV.29: ex eius regno piratas in Siciliam esse venturos.
[19] S t r a b o, XIV, 5, 2.

հենները փաստորեն ինքնուրույնաբար չհայտարարված պատերազմ էին մղում Հռոմի դեմ: Տիգրանի հետ դաշինքի հետևանքով, նրանք, ինչպես ցույց է տալիս Անտիոքոսին Սիցիլիայի մոտ բռնելու նրանց փորձը, կարող էին կոնկրետ դեպքերում գործել ի շահ հայոց թագավորի:

72 –71 թթ. Տիգրանը՝ Սելևկյանների ու նրանց դաշնակիցների՝ Նաբաթեացիների և Հուդայի ելույթի նաև Հայաստանում՝ Զարեհի ապստամբության պատճառով հնարավորություն չուներ կանգնեցնել հռոմեական առաջխաղացումը Պոնտոսում[20]: Հայոց արքայի շահերից էր Սպարտակի զորքերի փոխադրելը՝ Հունաստան՝ Արևելք, դրանով իսկ ինքնին կլուծվեր նրա առաջ ծառացած խնդիրը՝ ամենայն հավանականությամբ կարող էր հետաձգվել Հռոմի դեմ պատերազմը, որին 72-70 թթ. Տիգրանը պատրաստ չէր:

Տիգրանը հնարավորություն ուներ նման բնույթի մարտական օպերացիան իրականացնելու համար, նրա տրամադրության տակ էր կիլիկյան նավատորմը, որն ի վիճակի էր հասցնել ինչ-որ սահմանափակ քանակությամբ հայկական հեծյալ կոնտինգենտ Իտալիա՝ Բրուտիում՝ Սպարտակին օգնության: Հեծելազորը նավատորմով ծովային մեծ տարածությունների վրա տեղափոխելու պրակտիկան գործադրվում էր սկսած երկրորդ Պունիկյան պատերազմից (Պուբլիոս Կոռնելիոս Սկիպիոնի բանակի կազմում 1600 հեծյալ ավ ի ջավ Աֆրիկայում 204 թ.: Նումիդիայի արքա Մասինիսայի կողմից նավատորմով՝ Մակեդոնիա 1 հազ. հեծելազոր առաքվեց 197 թ.)[21]: Հռոմեահելլենիստական տրիերան ժամում անցնում էր 5-7 կմ, դրա բեռնունակությունը 13-18 տոննա էր: 24 ժամում նա կարող էր անցնել առնվազն 120 կմ: Այսինքն Սիրիան Իտալիայից անջատող ծովային տարածության 1800 կմ-ը նա ի վիճակի էր հաղթահարելու 15-16 օրում[22]: Եթե 72-71 թթ. իր մարտական հզորությունը գրեթե ամբողջապես կորցրած Պոնտոսի թագավորության փրկելու համար Տիգրանից պահանջվում էր պատերազմի մեջ մանել իր ողջ զինյալ ուժով (որ կաշկանդված էր Հարավային Սիրիայում և Փյունիկիայում և հենց իսկ Հայաստանում), ապա Բրուտիական թերակղզու հարավում զուտ տակտիկական բնույթի խնդրի լուծումը՝ պաշարողական գծի ճեղքումն ու դեռևս պարտություն չճանաչած բանակի ազատումը, պահանջում էր սահմանափակ քանակությամբ հեծելաջոկատի մասնակցությունը:

Ըստ Ապպիանոսի, Սպարտակն իր մոտ եկած հեծելազորին վճռորոշ դեր էր հատկացնում իր զորքերի ապաշրջափակման խնդրում և, ինչպես բխում է աղբյուրի վկայությունից, հեծելազորը հաջողությամբ արդարաց-

---

[20] Տե՛ս Ռ. Լ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ 94-64 թթ. մ.թ.ա., Երևան, 1987, էջ 105-114, Р. Л. М а н а с е р я н. Процесс образования державы Тиграна II. — ВДИ, 1982, № 2, с. 125-128.

[21] Tit. Liv., L. XXXI, 19, (4).

[22] Մենք վերցնում ենք նավերի արագընթացության վերաբերյալ ամենացածր տվյալները: Հայանի են և այլ տվյալներ. մ.թ.ա. 405 թ. Էգոս-Պոտամոսից (Դարդանելում) սպարտական նավը մինչև Սպարտա եղած 600 կմ-ը անցավ երկու օրում (В. Д. Б л а в а т с к и й. Природа и античное общество. М., 1976, с. 48): Մ.թ. առաջին դարերում բեռնատար նավերը Ալեքսանդրիայից Սիրակուզե հասնում էին 6 օրում, օրական անցնելով 240 կմ (Д ж. Л у ц ц а т т о. Экономическая история Италии. М., 1954, с. 86):

րեց այդ սպասելիքները (Կրասոսի ամրությունների գրոհը սկսվեց հեծելազորի բավականին համակենտրոնանալուց հետո):

Սակայն ի՞նչում պիտի կոնկրետ կայանար հեծելազորի դերը հռոմեական պաշարողական գծի հաղթահարման մեջ: Չէ՞ որ անհրաժեշտ էր քարերով, փայտով, մարդկանց և ձիերի դիակներով լցնել խոր խրամատը, մոպլցել թեք առնվազն 2 մ բարձրությամբ հողաթմբի վրա և (այստեղ կանգնելով) կործանել, տապալել հաստ և խոր ամրացված դերաններից պատնեշը, բացվածք բանալով 90 հազ. բանակի զորասյունների առջև: Այդ գործողությունը անհնար էր կատարել ձի հեծած: Այդ գործողությունը կարող էին անել միայն հետևակայինները:

Թե ինչ կարևոր դեր այդ պահին պիտի ստանձներ հեծելազորը, կարելի է հասկանալ, եթե նկատի ունենանք հայկական հեծելազորի մարտական օպերացիան, որը նա 69 թ. ամռանը հաջողությամբ իրականացրեց հռոմեացիների կողմից պաշարված Տիգրանակերտում, արքունիքի, կանանոցի և արքայական գանձարանի էվակուացումով:

Ըստ Մոմմսենի տվյալների, հայկական հեծելազորը դիպուկ և անդադար նետահարությամբ ամբողջ գիշեր թույլ չէր տալիս հռոմեացիներին դուրս գալ իրենց գաշտային ճամբարներից և գրոհել: Հակառակորդի աչքի առաջ նա դուրս բերեց պաշարված քաղաքից արքունիքն ու գանձարանը՝ գանդաղաշարժ և երկարաձգված թափորը, որը բարեհաջող հասցրեց Տիգրանի բանակատեղը: Տիգրանակերտի մոտ հայկական հեծելազորի այդ մարտավարության օրինակով կարելի է պատկերացում կազմել հեծելազորի անհրաժեշտ գործելակերպի մասին Բրուտտիական թերակղզում: Հարկ է ենթադրել, որ հեծելազորը նպատակ ուներ զսպելու և հեռավորության վրա պահելու հռոմեական բանակը: Պատնեշի տապալումից հետո առաջխաղացած հեծելազորը ապահովեց զորասյունների անցումը խրամատի վրայով և հետագա շարժումը: Այդ բնույթի խնդիրն ի վիճակի էին իրագործել միայն արևելյան հեծյալ նետաձիգները:

Այստեղ, ի դեպ, ընդգծենք այն կարևոր փաստը, որն իր ակնհայտության պատճառով չի մատնանշվել գրքույրում. պաշարողական գծի ետևում և նրա ոգջ երկայնքով տեղեկայված էր Կրասոսի բանակը՝ 10 լեգեոնը, հինգ գաշտային ամրացված ճամբարներում, որոնց միջև գործում էր մշակված հաղորդակցությունը: Այնուամենայնիվ հռոմեական լեգեոններն անզոր էին խոչընդոտել սպարտակյան բանակի առաջխաղացումը՝ նրանց մոտակայքով և նրանց դասավորության միջով:

Կրասոսի ամրությունների ճեղքման պահից մինչև Սպարտակի զորքերի կործանումը Ապուլիայում անցած մեկ ամսում (71 թ. մարտ) հռոմեացիներն ըստ ամենայնի չեն կարողացել պարզել հեծյալների էթնիկական իսկությունը, համենայն դեպս դա միակ հարցը չէր, որ պիտի նրանց մտահոգեր: Այդ ընթացքում, Սպարտակը արիերգարդային ճակատամարտերով նրան հետապնդող լեգեոնների դեմ համառորեն շարժվում էր դեպի Բրունդիզիում: Երթի ժամանակ տեղի ունեցավ ապստամբների ճակատագրական պառակտումը, հավանաբար տակտիկական նկատառումներով: Գերմանակելտական զորքը, որն, թերևս չէր ուզում տեղափոխվել Հունաստան, անջատվեց Սպարտակի բանակից: Կրասոսը իսկույն ևեթ հարվածեց նրան

Լուկանյան լճի մոտ, բայց Սպարտակի արագ մարտադաշտ գալը հարկադրեց հռոմեացիներին նահանջել: Շուտով Կրասոսին հաջողվեց ջախջախել անջատական զորքը՝ ոչնչացնելով 12 հազ. մարդ: Սպարտակն այդ կորստից հետո ստիպված էր հետ նահանջել դեպի Պետելյան սարեր (ժամ. Լա-Սիլա սարահարթ): Նրան կրնկակոխ հետևում էր Կրասոսի ավանգարդը, երկու լեգ!ոնը. հանկարծակի գրոհով Սպարտակը ջախջախեց նրանց: Հռոմեացիները փախուստի մատնվեցին: Շնորհիվ այդ հաղթանակի, ապստամբների 60 հազ. զորքին հաջողվեց պոկվել, անջատվել Կրասոսից և սրընթաց մոտենալ Բրունդիզիումին[23]:

Հռոմեաստրկական կռիվներն աչքի էին ընկնում փոխադարձ անողոքությամբ: Հռոմեացիները գերի չէին վերցնում ըմբոստ ստրուկներին: Բրունդիզիումի մոտակայքում՝ Ապուլիայում Սպարտակի տված վերջին ճակատամարտում հերոսի մահով նրա հետ միասին ընկավ 55 հազար սպարտակցի մարտիկ: Ճակատամարտը շարունակվեց Սպարտակի զոհվելուց հետո էլ՝ հաջորդ օրը: Ամենայն հավանականությամբ, տիգրանյան հեծելազորը լիովին կիսեց իր մարտակիցների ճակատագիրը և հռոմեացիների համար դժվար էր պարզել, թե սպանվածների զանգվածում ով ով է:

---

[23] Քաղաքին մոտենալիս պարզվեց, որ այն Մարկոս Լուկուլլոսի նավատորմի և ափ իջած երկու հռոմեական լեգեոնի վերահսկողության տակ է: Հետազոտողները գտնում են, որ Սպարտակի նպատակն էր նավեր գրավել Բրուդիզիումում՝ Հունաստան փոխադրվելու համար: Այդ անտարակուսելի եզրակացությունը, սակայն, հարց է բովանդակում, արդյոք ապավինում էր Սպարտակը, համառորեն առաջխաղալով դեպի Բրունդիզիում սոսկ պատահաբար գտնել անհրաժեշտ քանակությամբ նավեր: Մ. թ. ա. 83 թ. Սուլլան Իտալիա իր 44 հազ. բանակը Բալկաններից փոխադրեց 1200 նավերով: Ակնհայտ է, որ 60 հազ. զորքի համար անհրաժեշտ էր նավերի ավելի մեծ քանակություն: Հավանական է ենթադրել, որ այդքան թվով նավ Բրունդիզիումում չէր կարող գտնվել: Հետևաբար, որոշակի հիմք ունենք ասելու, որ Սպարտակը վճռաբար շարժվելով դեպի Բրունդիզիում, հույսը չէր դնում բախտի բերմունքին, այլ վստահ էր իր զորքերի Հունաստան նավերով տեղափոխման մեջ: Ինչո՞վ կարող էր պայմանավորվել այդ վստահությունը, եթե ոչ նավատորմի սպասումով, որը պիտի վերցներ նրա զորքերը: Ապպիանոսի հաղորդմամբ (App. Mithr. 93) ծովահենները հաճախակի ափ էին իջնում Բրունդիզիումի մոտակայքում: Ուստի կարող ենք կռահել, որ 60 հազ. մարդ ընդունելու պատրաստ այդ նավատորմը գալիս էր դեպի Բրունդիզիում ե. գալիս էր դատարկ, առանց զինված անձնակազմերի: Ծովում կատարվող իրադարձությունները միշտ հռոմեացիների տեսադաշտից դուրս էին մնում: Այդ նավատորմից առաջ անցավ Մարկոս Լուկուլլոսը, փակելով Սպարտակի համար Իտալիայից ելքը: Հարկ է հատուկ անդրադառնալ կիլիկյան ծովահենների դիրքորոշմանը: Աղբյուրների սղության պատճառով այստեղ անխուսափելի են անպատասխան հարցեր: Նրանց Սպարտակին Սիցիլիա չտեղափոխելու պատճառները (Սպարտակի հետ նախնական պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո) անհայտ են: Թ. Մոմզենը (նշվ. աշխ., էջ 74) ոչ անհավանական կռահում է արել, թե ծովահենների կաշառել էին հռոմեացիները: Ակներևաբար, Կրասոսը չէր ցանկանում, որպեսզի Սիցիլիան կրկին հրկիզվի ստրկական ապստամբությունից: Շրջափակելով Սպարտակին Իրուստիական թերակղզու հարավային ծայրում՝ Կրասոսը պիտի վստահ լիներ, որ Սպարտակն այնտեղից Սիցիլիա չի կարող տեղափոխվել, այլապես Կրասոսի ձեռնարկած խրամատային պաշարողական աշխատանքներն իրենց իմաստն էին կորցնում: Մյուս կողմից ակնհայտ է, որ Արևելքի արքաները, իրենց շահերից ելնելով, նույնպես շահագրգռված չպիտի լինեին Սիցիլիա Սպարտակի տեղափոխմամբ, որտեղ պատերազմը պիտի տեղայնական բնույթ ստանար: Նրանց շահերից էր այդ զինուժի տեղափոխումը Արևելք:

Հարկ է նկատի ունենալ, որ կիլիկյան ծովահենները չեն ստեղծել պետություն՝ միասնական և հետևողական արտաքին քաղաքականությամբ: Գոյություն են ունեցել ծովահենների ինքնուրույն գործող զանազան միավորումներ: Հետևաբար, եղած փաստերը հնարավոր է, որ հակասական իրականությունն են արտացոլում. ծովահենների բարիդրացիական հարաբերությունները Տիգրան Մեծի հետ, հայոց թագավորի հանձնարարությունների կատարումը և Կրասոսի հետ ենթադրյալ գործարքը, որը, ի դեպ, իր բնույթով բացառություն էր կիլիկյան ծովահենության հակահռոմեական շարժման համար:

Սպարտակի մոտ Բրուտտիական թերակղզի անհայտ տեղից եկած հեծելազորի մասին հռոմեացիներն այլևս չէին հիշում: Սպարտակյան բանակի կործանումով 71 թ. մարտի սկզբներին այդ միջագեպի վերաբերյալ նրանց հետաքրքրությունը սպառված էր:

Ավարտելով, կցանկանայինք նշել, որ հեծյալների մասին Ապպիանոսի հաղորդման քննությունն անվերապահորեն հանգեցնում է նրանց ոչ տեղացի, այլ եկվոր լինելու մասին եզրակացության: Հետևաբար, իրավունք ունենք առաջադրելու (բացառման մեթոդին դիմելով) այն բացատրությունը, որ հեծյալներին ուղարկել էր Տիգրան Մեծը: Տվյալ բացատրությունը վարկած է, քանի որ հեծելազորի էթնոքաղաքական պատկանելության վերաբերյալ ուղղակի վկայություններ չկան և հավիվ թե երբևէ լինեն: Սակայն տվյալ վարկածը հաշվի է առնում այն ժամանակի բոլոր իրողությունները. Արևելյան Միջերկրածովքում միջազգային քաղաքական իրադրությունը՝ Տիգրան Մեծի հարաբերությունների բնույթը Հռոմի, Միհրդատ Եվպատորի և կիլիկյան ծովահենների հետ, Տիգրան Մեծի և Միհրդատի շահերը, հեծելազորը նավատորմով փոխադրելու պրակտիկ կողմերը, ռազմարվեստի ասպեկտները: Այդ ամենը նկատի առնելով, կարծում ենք, որ առաջարկած վարկածը գոյության իրավունք ունի սպարտակյան ապստամբության և Արևելյան Միջերկրածովքում միջազգային հարաբերությունների պատմագրության մեջ:

К ВОПРОСУ О КОННИЦЕ, ПРИШЕДШЕЙ К СПАРТАКУ
(Гипотеза о военных связях Тиграна Великого со Спартаком)

РУБЕН МАНАСЕРЯН

Резюме

В исследованиях, посвященных восстанию Спартака, не было должным образом рассмотрено сообщение Аппиана о коннице, прибывшей к Спартаку на юге Бруттийского полуострова, где он был блокирован Крассом системой полевых укреплений протянувшейся от Тирренского моря до Ионического моря. Аппиан сообщает: "Спартак, поджидая откуда-то к нему прибывавших всадников, более не шел в бой со всем войском, ... и так как из всадников многие уже прибыли к нему, Спартак бросился со всем войском через укрепления и устремился на Брундизий".

В сообщении Аппиана обращают на себя внимание следующие факты:

а) несмотря на тяжесть положения войск восставших (угроза голода, скорый приход армии Помпея), конница прибывает к Спартаку не сразу, а постепенно, небольшим числом. Медленное собирание конницы требует объяснения, ввиду того, что оно происходит в ограниченных пределах южной половины Бруттийского полуострова, на территории протяженностью не более 120-130 км от Мессинского пролива до самого северного из возможных рубежей укреплений Красса. Конница концентрировалась в течение не менее месяца (январь — февраль 71 г.).

б) Из свидетельства Аппиана также явствует , что несмотря на острую необходимость в коннице, Спартак был не в состоянии собрать ее сразу, но ожидал ее, хотя, за исключением проримски настроенных городов (Регии, Вибон и др.) восставшие рабы полностью контролировали остальную, сельскую территорию полуострова. Следовательно, исходный пункт отправления конницы — место ее первоначального нахождения — не был подконтролен Спартаку. То есть прибывавшие постепенно к Спартаку всадники не принадлежали армии восставших. Как пишет Аппиан, всадники прибывали "откуда-то" (ποθεν), из отправного пункта, явно вне расположения армии Спартака.

в) Особенно важно указать, что место, откуда всадники прибывали к Спартаку, осталось неизвестным Аппиану и его источнику (не исключено, что восходящему к самому Саллюстию). Незнание источником места в пределах небольшого горного пространства южной части полуострова остается необъясненным. Подчеркнем, что имеется в виду не единичное передвижение, исходный пункт которого почему-либо мог остаться неизвестным, а неоднократные передвижения конницы, которые происходили на территории, хорошо известной местному населению — информатору римлян.

Следует безоговорочно исключить, что этих всадников могли поставить Спартаку местные города, так же, как и возможность формирования конницы на месте из какого-либо рабского населения. Аппиан описывает действия высокопрофессиональной конницы: постоянные и неожиданные нападения на разных участках римских укреплений, забрасывание их легковоспламеняющимися связками дров. Полное незнание источником первоначального местонахождения конницы в весьма ограниченных пределах Бруттийского полуострова опровергает любую попытку приписать ей местное происхождение и свидетельствует о нахождении этого места за пределами полуострова, т. е. конницу доставляли из-за моря, на кораблях.

Тигран, в 72—69 гг. занятый борьбой в Финикии и Келесирии с признанным в Риме Антиохом XIII, был заинтересован в деблокировании армии Спартака и мог, с помощью флота союзных ему киликийских пиратов, отправить к нему контингент конных лучников.

Римляне не смогли установить происхождение конного контингента за короткий срок с момента его прибытия к Спартаку в январе-феврале 71 г. до его гибели вместе со спартаковской армией в марте 71 г. Морские же пути в Восточном Средиземноморье были вне контроля римлян.

ON THE CAVALRY COME TO SPARTACUS
(Hypothesis about Tigranes the Great's military communications with Spartacus)

RUBEN MANASERYAN

S u m m a r y

Appian's report about the cavalry come to Spartacus when he was cut off from the rest of Italy by Crassus's line of circumvallation on the southern part of Bruttian peninsula hasn't been studied thoroughly yet. Appian writes: "Spartacus, who was expecting a reinforcement of horse

from somewhere, no longer went into battle with his whole army... he resolved to risk a battle and as all of horsemen had already arrived to him he made a dash".

The following facts attract our attention in Appian's report.

a) In spite of insurgent's army grievous situation (menace of hunger) the cavalry comes not at once, but gradually, in small quantity. The slow concentration of cavalry needs an explanation, as it takes place on the limited area of southern part of Bruttian peninsula, in the territory not larger than 120-130 km (from Messanian strait to the most possible northern line of Roman circumvallation). This cavalry was concentrated in not less than a month time (January-February 71).

b) According to Appian's report, though Spartacus was in great need of horsemen he wasn't able to gather them at once (he must have expected them), though he controlled all the southern part of peninsula, except the pro–Roman cities. It means that the initial place of departure of this cavalry was out of Spartacus's power. The horsemen who gathered gradually under Spartacus's order weren't from his army. Just according to Appian they came to Spartacus "from somewhere (ποθεν) obviously from the spot localized outside of his headquarters.

c) It is necessary to mention that the place from where they had arrived remained unknown to Appian and his sources, probably derived from Sallustius.

This strange ignorance by Appian of cavalry's initial location in the limited, little and mountaineous area of southern Bruttium remains inexplicable. It is important to emphasize that we take into account not a single march, the place of departure of which remained unknown for some reasons, but the cavalry's repeated movements, passed in the territory well familiar to local population, the Romans' informant.

It must be excluded that these horsemen could be supplied to Spartacus by Bruttian cities or this cavalry could be organized amid some local slaves as well. Appian describes the actions of high professional cavalry (unexpected and continual attacks upon the Roman circumvallation and throwing fagot's bundles are essential to cavalry's tactics).

So, the complete ignorance of cavalry primordial location by the source within the limited area of Bruttian peninsula refutes any attempts to impute to him local Italian origin and testifies to the place of his location over the peninsula, i. e. the cavalry was supplied over the sea, by the ships.

Tigranes, fighting in 72-69 against king Antiochus XIII, Roman friend and ally and Nabateans in Phoenicia and Coelesyria, was interested in deblockation of Spartacus's army and was able to send a contingent of horse archers to Spartacus.

This military operation Tigranes could realize by means of fleet of Cilician pirates, his allies (Strabo, XIV, 5, 2). The Romans couldn't establish the identity of these horsemen through the short period of time from their coming in January and February 71 to their destruction together with Spartacus's army in March 71. And the maritime routes in Eastern Mediterranean were out of the Romans' control and visibility at this time.